ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվի փետրվարի 10-ին, հինգշաբթի օրը, սրբոց Վարդանանց տոնի առիթով, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ Մայր տաճարում կատարվեց քահանայական ձեռնադրություն:

Հոգևոր ճեմարանի նախկին չորս շրջանավարտ ուսանողներ՝ Դավիթ սարկավագ Դիլանյանը, Հովհաննես սարկավագ Հակոբյանը, Արարատ սարկավագ Գալստյանը և Եղիշե սարկավագ Բաղրամյանը, ձեռնադրությամբ տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանի, արժանացան քահանայական սուրբ աստիճանին՝ վերանվանվելով տ. Վարդան աբեղա Դիլանյան, տ. Հովսեփ աբեղա Հակոբյան, տ. Մասիս աբեղա Գալստյան և տ. Եղիշե քահանա Բաղրամյան:

Նույն օրը, երեկոյան ժամերգությունից հետո, նորընծա երեք աբեղաները Մայր տաճարում, ըստ Մաշտոցի, աղոթքով և օրհնությամբ, ստացան վեղար:

Այս առթիվ ուրախությամբ արձանագրում ենք նաև, որ 1971 թվի սեպտեմբերին և 1972 թվի փետրվարին կատարվեցին հետևյալ քահանայական ձեռնադրությունները.

Արարատյան թեմում՝ տ. Սարգիս քահանա Թաշճյանի, տ. Բարսեղ քահանա Միրզախանյանի, տ. Մկրտիչ քահանա Ստեփանյանի, տ. Գալուստ քահանա Քեքլիկյանի:

Վրահայոց թեմում՝ տ. Տիրայր քահանա Կոնսուլյանի, տ. Տաթև քահանա Սաղոյանի, տ. Շմավոն քահանա Հարությունյանի:

Շիրակի թեմում՝ տ. Վահան քահանա Մարգարյանի:

Բացի այդ, 1971 թվի դեկտեմբերի 25-ին, սուրբ Ստեփանոսի տոնի օրը, սարկավագ ձեռնադրվեցին հոգևոր ճեմարանի Բ լսարանի հինգ ուսանողներ՝ Վրեժ Նաջարյանը, Նորայր Ավագյանը, Հակոբ Խաչատրյանը, Սամվել Պետրոսյանը և Ավետիք Արաքաջյանը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

15-ը փետրվարի 1972 թ.,
Ս. Էջմիածին